

զրեց , ինչպէս քնարերգակ և պարերգակ քերթուածներ , Արիպիդեայ և Սիրգիլիոսի գրուածոցը ազատ թարգմանութիւններ , իմաստասիրական ընտանի գրուածներ , Սարիսմ Սրուարս , Յովհաննէս Տ'Լըր , Վալտէրստի (Վէլ , և ուրիշ շատ անուանի նոխազերգակ քերթութիւններ : Սիտքը ուրիշ շատ բաներ ալ զրած էր գրելու , բայց յանկարծահաս մահը թէ իրեն ղիտաւորութիւնները , և թէ բանասիրաց իրաւացի ակնկալութիւնն ու բաղձանքը իրախանեց , այն մեծանուն քերթողին կեանքը վերցրնելով իր քառասունը հինգ տարուան հասակին մէջ , յամի 1805 , մայիսի 9ին : Ենքն իսկ Վեթէ անմխիթար ողբաց իր ազնիւ բարեկամը , և հայրենեաց ու բոլոր աշխարհի պարծանքը :

Քանի մը խօսք ալ Շիլլէոի թատրերգակ քերթութեանցը վրայ լսենք : Ընոնց ամենուն մէջ ալ բարոյական և կրթական ընտիր իմաստներ լեցուն են . անոր համար ալ է որ աշխարհաքաղաքացի ըսուած սակաւաւոր մարդիկներէն կրնայ սեպուիլ , և իրեն գրքերը ամէն կրթեալ ազգաց մէջ փառք ու մեծարանք գտեր են : Սեւմ մտածմանցը հետ ազնուական կերպ մըն ալ ունի բացատրելու , և քերթողաց զրեթէ շատ բանի մէջ՝ նմանողութեան միակ գաղափարը կրնայ սեպուիլ . ինքը արուեստը արուեստի ծառայեցրնելու տեղ , որ հետեւակ բանասիրաց սովորական ու անխորշելի թերութիւնն է , հանձարոյն հնազանդ և անոր զուգընթաց ծառայ մը ըրաւ արուեստը , և անով անմահացաւ : Սարգուս ինչպէս ըլլալը նկարագրելու տեղ՝ մարգս ինչպէս արժան է որ ըլլար՝ այն բանը լաւ կերպով նկարեց : Հիմնական եւրոպացի ազգաց թատրոնական քերթութեանցը ճաշակը առնող ազգայինք՝ հարկաւ իմացած պիտի ըլլան՝ թէ ինչ գլխաւոր հիման վրայ հաստատուած՝ և գրեթէ անով միայն կը դառնան . Շիլլէո այս բանիս մէջ ալ շատերուն օրինակ կրնայ ըլլալ և յորդորիչ , որ մարգս

իր աստուածադիր բարձրութենէն վար չխոնարհեցրնեն , ու անարժան կրկ բողբովին ծառայ չցուցրնեն . վասն զի իր դիւցազունըր առաքինութեան սիրողք են և հետեւողք , մարդկութեան և աշխարհի օգուտը կը մտածեն : Սէկ խօսքով , քաղաքական կրթութեանը պատաւոր մեծ քերթող մը եղաւ Շիլլէո :

Սերջի տարիներս՝ Եհաստանցի հակազուն երևելի բանաստեղծ մը Սի. նասեան անունով Շիլլէոի ամէն գործքերը գերմաներէնէ լեհերէն փոխեր է գեղեցիկ թարգմանութեամբ :

Սենք ալ ազգայնոց Շիլլէոի հանձարոյն ճաշակ մը տալու համար՝ իրեն գեղեցիկ քնարերգակ բանաստեղծութիւններէն մէկը կը դնենք գալ ամսուն թերթին մէջ՝ գերմանացի բնագրէն հայերէն թարգմանած :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ
 ԸՌՈՂՁՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԵՐ
 ԳԼՈՒԽ Զ .

Լեռնա-Ռեան . — Լեռնացեւոյ ընել- առաջին դարձանները :

Ե . Լեռնա-Ռեան . — Լեռնացեւոյ ընել- առաջին դարձանները :

Լեռնութիւն կ'ըսուի շնչառութեան երևոյթներուն դադրիլը :

Արքոր ինչ և իցէ պատճառաւ օդը մարդուս թոքին մէջ չմտնայ , երակներուն արիւնը կ'երթայ սրտին ձախ կողմի խորշերուն մէջ կը մտնէ , անկէց ալ շնչերակներուն մէջ կ'անցնի առանց թթուածինի հետ միանալու , ուստի սե կը մնայ : Այլ որովհետեւ սե արիւնը չկրնար սնունդ տալ մարմնոյն , որ գործարանին որ դալի՝ զանիկայ ուժէ կը ձգէ : Ամենէն առաջ ուղեղը աս բանիս վնասները կը քաշէ . մէկէն ջղե-

1 Այս գլխոյս Ա . Բ . Գ . Դ հաստուածները անս Բազմ . հաս . Ը . երես 315 . 334 . 376 :

րուն վրայ ունեցած ազդեցութիւնը կը դադրի, մարդս բոլորովին զգայութիւնը կը կորսնցնէ ու ամենեւին արտաքին բան մը չիմանար :

Թէ որ ան վիճակին մէջ մնայ հիւանդը, շուտ մը թոքին նրբաթել երակները սև արիւնով կը լեցուին, ու վրան շատ չանցնիր՝ ան գործարանն ալ կը մեռնի . կամայ կամայ մէկալ գործարաններուն շարժումն ալ կը դադրի, սիրտն ալ սև արիւնով լեցուելով՝ բոլորովին ուժէ կ'իյնայ ու զարնելն ալ կը դադրի :

Ինչնչութեան պատճառ միշտ շնչաուութեան արգիլուիլը եղած է, և աս արգելքը շատ կերպով կ'ըլլայ .

ա, Երբոր շնչաուութեան գործարաններն ու մկանսները սաստիկ ծանր կերպով փնտռուին :

բ, Երբոր աս գործարաններն ու մկանսները սաստիկ ճնշուելով չկարենան բանիլ :

գ, Երբոր կոկորդը, կամ բերանն ու քիթը բոլորովին գոցուին :

դ, Երբոր երկրիս երեսին վրայ օդը սաստիկ տաքութեամբ անօսրացած ըլլայ, և կամ բարձր լեռներու ծայրերը ուր մթնոլորտի օդին կարգերը խիստ բարակ կ'ըլլան : Աստի օդ չեղած տեղը ինչ որ կը զգայ մարդ, նոյնը կը զգայ նաև այսպիսի տեղուանք, որ յայտնի կ'երևնայ օդահան մեքենային ընդունարանին տակը դրուած կենդանիներուն վրայ, որ օդը հանելուդ պէս՝ մէկէն կ'իյնան կ'անշընչանան :

ե, Մթնոլորտի օդէն տարբեր կազի մը մէջ ընկղմուելով, զոր օրինակ ջրածնի, անկենդան կազի, ածխային կազի, մթնոլորտի ապականած օդին՝ որուն մէջէն բոլորովին թթուածինը զացած ըլլայ՝ կամ այրուելով և կամ արտաշնչութեամբ :

զ, Հանկարծական կաթուածով, ուրով արեան շրջանն ու մարդուս շնչաուութիւնը կ'արգիլուի :

է, Այն վառած ածուխին գոլորշիքն ու հոտը, նոր գինիներուն ածխային կազը, կարեաց տեղերուն ծծմբային

ու բորակային կազերը, ու նաև երկարատեն ջրի մէջ ընկղմած կենալը :

Իմէն աս տեսակ դիպուածներու մէջ ալ մարդս շուտ մը կը մեռնի . վասն զի սև արիւնը կը տարածուի բոլոր շնչերակներուն մէջ : Իս բանս ամենէն աւելի ջրի մէջ խղզուողներուն կը պատահի . և անոնք ուրիշ ճար չունին, բայց եթէ ջրին մէջ ընկղմելու ատեննին օդ ծծել, և որչափ որ կրնան՝ շունչերնին բռնել . ցուրտ ատեն օդին խրտուութիւնն ալ շատ կ'օգնէ իրենց : Իսկ անոնք որ փնասակար կազի մէջ պաշարուած կը գտնուին, դժուար կը հանդիպի որ չկարենան կերպով մը անկէց հեռանալ . անկէց ՚ի զատ քիչ անգամ կը պատահի որ ան գէշ կազին հետ քիչ մը թթուածին ալ խառնուած չգտնուի : Եւ սակայն աղէկը ան է որ մարդ ոչ երբէք մտնէ այնպիսի ստորերկրեաց տեղուանք ուր որ երկար ատեն բնակութիւն չէ եղած, առանց պէտք եղած զգուշութիւններն ընելու . Խոհեմութեանը մայր է ապահովութեան :

Այստ շատ դիպուածներ կը պատահին ամէն օր ջրհորներու մէջ, ուր կը դիզուի ածխային թթու կազը, որ հասարակ օդէն աւելի ծանր է . նմանապէս կարեաց տեղերը, ուսկից կ'ելլեն ջրածին ու բորակային կազերը . ածխահանքերուն մէջ, ուսկից կ'ելլէ այրեցական կազը, և ընդհանրապէս ամէն խորունկ տեղուանք ուր որ կենսական օդ չգտնուի :

Նշանակալից ըսեր ենք թէ մէկ հնարք մը կայ բոլոր աս վտանգներուն դիմացը առնելու : Ախայն կիրն է որ կրնայ ածխային թթու կազը ծծել ու փճացնել . իսկ քլորային նիւթերը թէպէտ ուրիշ շատ օգուաններ ունին, բայց ջրհորներուն օդը մաքրելու չեն գար :

Տարակոյս չկայ թէ քլորային նիւթերը շատ աղէկ են կարեաց տեղերուն ապահանութիւն ջնջելու համար . բայց երբոր չմարած կիրը առատ ջրով խառնես, շարժես ու այնպիսի փոսերու մէջ լեցնես, բաւական կ'ըլլայ անոնց գար շահութեամբ թիւնը փալատելու :

Մենասահարկաւոր բան է որ բանաւոր մը ցած ու վտանգաւոր տեղեր իջնալէն առաջ ամենայն զգուշութիւն ընէ, որպէս զի վտանգի մը չհանդիպի . և ամենէն աւելի ապահով զգուշութիւնն աս է որ նախ վտանգաւոր տեղերուն ինչուան յատակը ճրագ մը իջեցընէ . թէ որ ճրագը չմարի, ըսել է թէ կրնայ մարդ ալ ապրիլ հոն, իսկ թէ որ մարի, նշան է թէ մարդն ալ իջնալու որ ըլլայ՝ ան ճրագին պէս պիտի մարի անցնի :

Երբոր ջրհորի մը օդին վնասակարութիւնը մէկը իմանայ, պէտք է մէջը երկու կամ իրեք հարիւր լիտր չմարած կիր լեցընէ . և երբոր տեսնէ թէ ան կիրը բաւական մարեցաւ, պէտք է ծանր քար մը չուանի մը ծայրը կապէ ու վար իջեցընելով՝ ջրհորին ջուրը խառնէ, որպէս զի կիրին հետ աղէկ մը զանգուի :

Թէ որ աս դիւրին հնարքը չկարենաս ընել, պէտք է ջրհորին բերանը տաշտերով լեցուն հալած կիր բռնես ու ստէպ ստէպ առնես անկէց, ջրհորին պատերուն չորս կողմը զարնես :

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Սարգսն զանազան էլիմաներու որակ առնել ցած յապիտութիւնները :

ՊԳԷԼ, Պասման Վոր-Օ ելանտայի ծոցի մը մօտերը կերկերաձայն և յաղթասակ մարդիկ տեսեր է . գոյներնին սևորակ դեղին, մազերնին սև, երկայն ու թաւ՝ դագաթներնուն վրայ ժողովուած, մէջտեղն ալ երկայն փետուր մը խոթած . ոմանք մէջքերնին փսիաթկապեր էին, ոմանք ալ բամպակեղէն լաթ մը, շատերն ալ մերկ : — Վուք կ'ըսէ թէ Վոր-Օ ելանտայի բնակիչները ընդհանրապէս ամենէն բարձրահասակ Եւրոպացուոց չափ կան, մտեղ,

ուժով, բարեկազմ, աշխոյժ և ճարպիկ են . գոյներնին ընդհանրապէս թուխ, կանայք գծագրութեամբ էրիկ մարդկանցմէ շատ չեն զանազանիր, ձայներնին շատ քաղցր է և անով միայն էրիկ մարդկանցմէ կը տարբերին, վասն զի հագուստնին ալ նայն է : Օ ելանտացուոց մազն ու մորուքը սև են, ակուանին ճերմակ ու միակերպ, քաջառողջ են և երկայն կ'ապրին . իրենց գլխաւոր կերակուրն է ձկնեղէն :

Սյս երկիրներու և հարաւային ծովուն կղզիներուն բնակչացը մէջ շատ նմանութիւններ կան թէ՛ սովորութեց և թէ լեզուի կողմանէ, որով ըսել է թէ բոլոր այս կղզիաբնակներուն ծագումը մէկ է : Վուք կ'ըսէ թէ ասոնց ծագումը Վերիկայէն չէ, որ այս երկիրներու արևելեան դին կ'իյնայ . և որովհետև () դայիդիներուն և Եւրազական ծովուն ուրիշ կղզեաց լեզուն, ինչպէս նաև Օ ելանտացուոց լեզուն, շատ յարաբերութիւններ ունին հարաւային Հնդկաց լեզուներուն հետ, հաւանական է որ բոլոր այս ժողովրդոց ծագումը Հնդկաց արշիպեղագոսէն ըլլայ :

Ինչպէս ինչուան հիմնայ տեսանք, մարդուս բնական ու բարոյական յատկութիւններուն վրայ մեծ ազդեցութիւն ունի տեղւոյն կլիման : Վիտուած է ընդհանրապէս որ տաք երկրի բնակիչները պղտիկ, չորջրուկ, աշխոյժ, զուարթ ու վառվրուուն կ'ըլլան, բայց միանգամայն ոչ այնչափ ուժեղ և ոչ ալ աշխատասէր կ'ըլլան . հասակնին աւելի շուտով կը հասնի ու շուտով կը ծերանան քան թէ ցուրտ կլիմաներուն տակի բնակիչները : Վանայք այնչափ բազմածին չեն ըլլար, աւելի վայելուչ քան թէ գեղեցիկ են, մէջերնին խարտեաշ կին մը սակաւագիւտ է, ինչպէս հիւսիսային կողմերն ալ թխագոյն կին մը :

Վեղեցկութիւնը մեծաւ մասամբ կլիմային բարեխառնութենէն կը կախուի . ցուրտը հիւսիսայնոց մարմնոյն արտաքին գործուածքը ամփոփելով՝ մորթին թուլութիւնն կը խափանէ . այրե-